

**ԱՆՉԱՓԱՀԱՍ ՀԱՆՑԱԳՈՐԾՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՍՈՑԻԱԼ-
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԿՋԲՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ
ՄԵԹՈԴՆԵՐԸ՝ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՄԱՍՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ
Մարտիկյան Լ. Ռ.**

Հանցագործությունը մեր օրերում մեծ չարիք է, իսկ անչափահասների հանցագործությունը՝ բազմակի անգամներ մեծացված: Անչափահասների հանցավորության ներկա վիճակից, դրա միտումներից է կախված հանցավորության ապագա վիճակը: Հանցավորության նկատմամբ արդյունավետ վերահսկողություն ապահովելու համար կարևոր է անչափահասների հանցավորության կանխման արդյունավետ միջոցառումների մշակումը: Իսկ դա հնարավոր է միայն անչափահասների հանցավորությանը նպաստող գործոնները բացահայտելու միջոցով:

Բանալի բառեր. անչափահաս հանցագործներ, հանցագործություն, անօրինական վարքի ձևավորում, սոցիալ-մանկավարժական աջակցություն, հիմնական միջոցներ, մեթոդներ, սկզբունքներ՝ անչափահասների շրջանում, դեռահասներ, հանցագործության նվազեցում, շտկողական աշխատանք, վերադաստիարակություն:

Նախաբան: Անչափահասների հանցավոր վարքն ուսումնասիրվել է մի շարք մանկավարժների և գիտնականների կողմից (Վ. Ս. Սոլովև, Ա. Վ. Սուվորով, Ս. Ա. Պետրենկո, Ա. Վ. Մուդրիկ, Բ. Թ. Բելիչևա և ուրիշներ), ովքեր դիտարկել են անչափահասների հանցագործության նվազեցման հիմնական միջոցներն ու մեթոդները:

Տվյալ հոդվածի նպատակն էր ուսումնասիրել անչափահաս հանցագործների անօրինական վարքը, նրանց տրվող սոցիալ-մանկավարժական օգնությունը (աջակցությունը), մեթոդներն ու սկզբունքները: Այս ուսումնասիրությունը իրականացվել է Վանաձոր քաղաքի Տարոնի բաժնի ռստիկանությունում, «Մայիսակի

երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնում և Վանաձորի մի շարք դպրոցներում: Հետագոտության ընթացում կիրառել ենք հետևյալ մեթոդները՝ դիտում, գրույց, հարցաթերթիկ, համեմատություն, փաստաթղթերի վերլուծություն:

Հոդվածի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ այսօր մեր հասարակության առջև ծառայած սոցիալապես կարևոր խնդիրներից մեկը անչափահասների շրջանում հանցագործությունների աճի նվազեցման ուղիների որոնումն է և դրանց կանխարգելման արդյունավետությունը: Արդի պայմաններում անչափահաս հանցագործների հետ աշխատելու նոր, արդյունավետ մեթոդների և սկզբունքների անհրաժեշտություն կա, որը թույլ կտա դեռևս վաղ փուլերում միջամտել անօրինական վարքի ձևավորմանը: Այսօր հատկապես արդիական է դառնում սոցիալական ոլորտի մասնագետների, մասնավորապես սոցիալական մանկավարժի սոցիալ-հոգեբանական և մանկավարժական աջակցությունը հանցագործություն կատարած անչափահասների շրջանում:

Սոցիալական մանկավարժը ախտորոշման նպատակով հավաքում է տեղեկատվություն անչափահասի, նրա ընտանիքի վերաբերյալ, բացահայտում է հակաօրինական վարքի առաջացման պատճառները:

Հոդվածի հիմնական բովանդակությունը: Հանցագործ անչափահասների հետ սոցիալ-մանկավարժական աշխատանքը կարող է կազմակերպվել տարբեր հաստատություններում, այդ թվում՝ դպրոցում և վերականգնողական կենտրոնում: Հանցագործ անչափահասների հետ աշխատելը անպայման ենթադրում է վերադաստիարակման գործընթաց՝ նրանց վարքի տարբեր շեղումների կանխարգելման և հաղթահարման համար:

Մ. Ա. Գալագուզովան, Մ. Ն. Կոստիկովան նշում են, որ սոցիալական մանկավարժը հանցավոր վարքագիծ ունեցող երեխաների և դեռահասների հետ աշխատանքում ցուցաբերում է տարբեր օգնություններ՝

➤ սոցիալ-տեղեկատվական	➤ սոցիալ-իրավական
➤ սոցիալ-վերականգնողական	➤ սոցիալ-կենցաղային
➤ սոցիալ-տնտեսական	➤ բժշկասոցիալական
➤ սոցիալ-հոգեբանական	➤ սոցիալ-մանկավարժական

Անչափահաս հանցագործների հետ աշխատելիս սոցիալական մանկավարժը առաջնորդվում է մի շարք սկզբունքներով.

Պահանջների միասնության և անչափահասի անձի նկատմամբ հարգանքի սկզբունքը:

Դաստիարակչական ազդեցությունների հետևողականության, համակարգվածության, միասնականության և շարունակականության սկզբունքը:

Ձևավորման սկզբունքը գիտակցության և վարքի միասնության մեջ: Թիմում և թիմի միջոցով դաստիարակության սկզբունք:

Այս փուլում կարևոր է շտկողական աշխատանքը, որն ուղղված է անձի վարքը ուղղելուն, արժեքային կողմնորոշումները փոխելուն, իսկ դրանց միջոցով փոխվում են ներքին համոզմունքները, միջանձնային որակները:

Վ. Պ. Կաշենկոն մշակել է շտկողական աշխատանքի մեթոդներ, որոնք միավորել է երկու խմբի մեջ՝ մանկավարժական և հոգեթերապևտիկ:

Լ. Ս. Վիգոտսկին ասել է. «Մեթոդի խնդիրը դեռահասի մշակութային զարգացման ողջ պատմության սկիզբն ու հիմքն է՝ ալֆան և օմեգան»: Իրապես հենվել մեթոդի վրա, հասկանալ դրա կապը այլ մեթոդների հետ, հաստատել դրա ուժեղ և թույլ կողմերը, հասկանալ դրա նշանակությունը և զարգացնել դրա նկատմամբ ճիշտ վերաբերմունքը և գիտական մոտեցումը ամենակարևոր խնդիրների լուծման ժամանակ [3, 89]:

Սոցիալ-մանկավարժական գործունեության մեջ լայնորեն կիրառվող մեթոդներն են համոզումը և վարժությունը [1, 68]:

Համոզումը մանկավարժության մեջ կարող է իրականացվել այնպիսի հայտնի մեթոդների միջոցով, ինչպիսիք են զրույցը, դասախոսությունը, բանավեճը, դրական օրինակը:

Վարժության մեթոդի օգտագործման արդյունավետությունը մեծանում է, երբ սոցիալական մանկավարժը դիմում է վարժության մեթոդի կազմակերպման այնպիսի ձևերի, ինչպիսիք են ստեղծագործական և դերային խաղերը [1, 68]:

Անչափահասների հետ բանավեճի կիրառումը նպաստում է դասողությունների ձևավորմանը: Բանավեճի դրական արդյունքը կախված է սոցիալական մանկավարժի մանրակրկիտ նախապատրաստումից, բանավեճի թեմայի ընտրությունից, առաջարկվող հարցերի հասկանալի ընտրությունից, որոնք երեխաների մոտ կառաջացնեն հետաքրքրություն քննարկման համար [2, 78]:

Դաստիարակչական օրինակի մեթոդը հիմնված է անչափահասների ընդօրինակման այն գործողությունները և արարքները կրկնօրինակելու վրա, որոնք համապատասխանում են

իրենց հայացքներին: Կ. Դ. Ուշինսկին գրել է, որ դաստիարակչական ուժը թափվում է միայն մարդկային անձի կենդանի աղբյուրից, որ անձի դաստիարակության վրա կարող է ազդել միայն անձը [4, 93]:

Սոցիալ-մանկավարժական մեթոդների մեջ հատուկ խումբ են կազմում խրախուսման և պատժի մեթոդները: Այս ոլորտում կարևոր է նաև Ա. Ս. Մակարենկոյի մոտեցումը: Նա գտնում էր, որ պետք է հաճախ խրախուսել, պատժել միայն հազվադեպ՝ անհրաժեշտության դեպքում: Շ. Ա. Ամոնաշվիլին կարծում էր, որ պետք չէ պատժել, միայն խրախուսել:

«Մանկավարժական պահանջ» մեթոդը պետք է առաջացնի ոչ միայն անձի զարգացում, այլև վերածվի իր անձի նկատմամբ դաստիարակվողի պահանջի: Ըստ ներկայացման ձևի՝ պահանջները լինում են ուղիղ և անուղղակի:

Հաջորդ մեթոդը «պայթյունն» է: Մեթոդի այս անվանումը տվել է խորհրդային ժամանակաշրջանի տաղանդավոր մանկավարժ Ա. Ս. Մակարենկոն:

Ոստիկանության Վանաձոր քաղաքի Տարոնի բաժնի անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման բաժանմունքի պետ, ոստիկանության փոխգնդապետ պարոն Ռ. Վարոսյանի բաժինն իրականացնում է հանցագործությունների կանխում, բացահայտում, վերահսկողություն և տունայց: Մեզ ներկայացվեց վերջին 6 տարվա վիճակագրական տվյալները (աղյուսակ 1):


Աղյուսակ 1:

Վիճակագրական տվյալներ (տեղեկատվական)


ԹՎԱԿԱՆԸ	ԱՆՉԱՓԱՀԱՍ
	ԻՐԱՎԱՆԱԽՏՆԵՐԻ ԹԻՎԸ
2015	42
2016	53
2017	54
2018	34
2019	26
2020	32

Հաջորդիվ կիրառել ենք հարցաթերթիկ՝ նախատեսված սոցիալական մանկավարժների համար, որի նպատակն էր պարզել հանցագործություն կատարած անչափահասներին սոցիալ-մանկավարժական օգնության մեթոդներն ու սկզբունքները:

Հետազոտության արդյունքները ներկայացված են ստորև՝ գրաֆիկների տեսքով (նկար 1, 2):



Նկար 1. Հանցագործություն կատարած անչափահասների հետ կիրառվող մեթոդները:



Նկար 2. Հանցագործություն կատարած անչափահասների հետ աշխատանքի սկզբունքները:

Եզրահանգումներ: Գիտատեսական գրականությունն ուսումնասիրելիս պարզեցինք հանցագործություն կատարած անչափահասների սոցիալ-մանկավարժական օգնության սկզբունքներն ու մեթոդները: Անչափահասների անօրինական և շեղված վարքագծի պատճառները տարբեր են, այդ թվում՝ ընտանիքում անբարենպաստ իրավիճակը, անկախության ձգտումը, ծնողական գիտելիքների բացակայություն այն մասին, թե ինչպես հաղթահարել մանկավարժական դժվար իրավիճակները: Հանցագործություն կատարած անչափահասներին՝ սոցիալ-մանկավարժական օգնության հիմնական մեթոդներն են՝ համոզում, վարժություն, զրույց, բանավեճ, խրախուսանք, պատիժ, դերային խաղեր, դիդակտիկ խաղեր: Աշխատանքի ընթացքում սոցիալական մանկավարժն առաջնորդվում է հետևյալ սկզբունքներով՝

անհատական մոտեցում, մարդասիրություն, բարոյական արժեքների կարևորում, հետևողականություն, գաղտնիություն:

**ПРИНЦИПЫ И МЕТОДЫ СОЦИАЛЬНО-ПЕДАГОГИЧЕСКОЙ
ПОМОЩИ НЕСОВЕРШЕННОЛЕТНИМ ПРЕСТУПНИКАМ,
УТВЕРЖДЕННЫЕ ЭКСПЕРИМЕНТАЛЬНО**

Марукян Л. Р.

Преступность в наши дни - это большое зло, а преступность среди несовершеннолетних во много раз выше. Будущее состояние преступности среди несовершеннолетних зависит от текущего состояния преступности среди несовершеннолетних. Важно разработать эффективные меры по предупреждению преступности среди несовершеннолетних, чтобы обеспечить эффективный контроль над преступностью. А это возможно только путем выявления факторов, способствующих преступности несовершеннолетних.

Ключевые слова: несовершеннолетние правонарушители, преступление, формирование противоправного поведения, социально-педагогическая поддержка, основные инструменты, методы, принципы, применяемые среди несовершеннолетних подростков, снижение преступности, исправительная работа, реабилитация.

**PRINCIPLES AND METHODS OF SOCIAL AND PEDAGOGICAL
ASSISTANCE TO MINORAL CRIMINALS APPROVED EXPERIMENTALLY**

Maruqyan L. R.

These days crime, is a great evil, and juvenile delinquency is many times higher. The future state of juvenile delinquency depends on the current state of juvenile delinquency. It is important to develop effective measures for the prevention of juvenile delinquency in order to ensure effective control over crime. And this is possible only by identifying the factors that contribute to juvenile delinquency.

Keywords: juvenile delinquents the crime, the formation of illegal behavior, social and pedagogical support, basic tools, methods, principles, among minors, adolescents, decrease in crime, correctional work, rehabilitation.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Березина В. Социальный педагог в школе. // Воспитание школьников. 2001. № 2. С. 2-5.
2. Воловик А. Ф., Воловик В. А. Педагогика досуга. М.: Флинта. 2001. 123 с.
3. Выготский Л. С. Педагогика трудного подростка. М.: Просвещение. 1984. 210 с .
4. Туревская Р. А. К вопросу о смысловой организации переживаний в трудном подростковом и раннем юношеском возрасте // Вестник МГУ. Психология. 2002. № 4. С. 57-64.
5. <http://www.irtek.am/views/dictionary.aspx> (16.04.2021)

Տեղեկություններ հեղինակի մասին

*Մարուքյան Լ. Ռ. - մանկավարժական գիտությունների թեկնածու, ասիստենտ
Վանաձորի պետական համալսարան
Էլ. փոստ lusine.maruqyan@mail.ru*

*Տրվել է խմբագրություն՝ 25.09.2021
Գրախոսվել է՝ 06.01.2022*